ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"19" նոյեմբերի 2012թ № 164-Ա

<<ՏԱՆՁԱՎԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 32-րդ և 34-րդ կետերով և համաձայն <<Տանձավերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 14-ի նիստի N 3 արձանագրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել << Տանձավերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության համար անցկացված մրցույթի օրենսդրության համապատասխանությունը:
2. Կազմակերպության ընտրված տնօրեն Անժելա Թումանյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 19
ք. Կապան